

Մարդկան մոտածմունքները բոլորովին տարբեր են Աստուծոյ գործերից։ Նորա նախախնամութեան մէջ չկայ ոչ շտապիլ և ոչ կասիլ, ոչ վաստակիլ և ոչ ընդհատիլ։ ամենայն ինչ կատարումէ նա փառահեղ լուռութեան մէջ և նորա գործերը տեսանելի են խաւարում՝ ծագող խաղաղ լուսով։ «Նարժուեցան աստուածային խորհուրդները իւրեանց անչափելի խորութեան մէջ, անհատնում՝ հարստութեանց աղրիւրները բացուեցան, աղգերի ազատութեան ժամանակն հասաւ», բայց մարդկային կենաց մակերեսոյթի վրայ հազիւ նշանաբելի էին ջրի թեթեւ կոհակներ։ մարդկային գործերի ընթացքը իւր սովորական կարգով շարունակուեց և իւրաքանչիւր ոք զբաղուած էր իւր սեփական նախագծերով։

Որքան ժամանակ կոյսն Մարիամ իւր սուրբ Մանկան հետ մնաց այդ այրում կամ անամնոց ախոռում չէ կարելի որոշել։

Թարգմ. ՄԻԱԲԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ա. ԷՇՄԻԱՆԻ ԳՐԸՆԵՐԸ

Ազգի պատմութիւնը, նորա կեանքի հայելին է, որոյ մէջ պարզապէս երեսումէ այդ կեանքն իւր իւր բոլոր մանրամասութեամբ։ Խնչպէս ազգի կատարելութիւնք, նոյնպէս և պակասութիւնք ճշգութեամբ արտափայլում են այդ հայելու մէջ, և տալիս են իրանց ճանաչել, որպէս զի աղքն էլ կարող լինի հոգալ թէ իւր կատարելութեանց զարգացման և թէ իւր թերութեանց ջնջման համար, սոցա վնասակար հետեւանքներից իրան ազատ պահելու դիտմամբ։ Որքան այդ հայելին ընտիր է և պատկերը ճշգութեամբ ցոյց տուող, այնքան էլ ազգի կեանքի տարրներն աւելի պարզութեամբ կերեւեն նորա մէջ։ Այսպէս ուրեմն, որքան ազգի պատմութիւնն աւելի մըշակուած է, որքան աւելի քննութեան բովքից անցած են ազգի կեանքի ամեն տարրները, այնքան և աւելի պատմութեան օգուտը մեծ է։ Անցեալ ներկային խրատ է, և ներկայն ապագայի տնօրէնը։ Աղագայի համար պիտի աշխատի ներկան, իսկ

ոս պէտք է լաւ ծանօթ լինի անցեալին. որպէս զի ազգի անցեալում գործած սիալներն, իւր բոլոր վնասակար հետեւանքներով, չգործէ եւ ներկայումս ի վնաս ապագային:

Յայտնի է, որ մեր ազգի պատմութիւնը գեռ շատ քիչ է մըշակուծ. մինչեւ ցայժմ եղած աշխատանքներն այդ մասին, որքան էլ պատիւ և յարգանք յարուցանելու լինին նոքա մեր մէջ, այդ առարկայի մշակների վերաբերութեամբ, որքան էլ ազգի պատմութեան մշակները պատկառելի և մեծարելի են մեր աչքում. բայց և այնպէս գեռ ևս մեր պատմութիւնը կարօտ է երկարատև մշակութեան և բազմաթիւ գիտնական մըշակների քրտանց, որպէս զի լինի պարզացոյց և ջինջ հայելի ազգի կեանքի: Մեր ազգի պատմութիւնը լիքն է մութը և չըբացատրուած կետերով, ամբողջ շրջաններ կան նորա մէջ, որոնք բնաւ պարզած չեն, մատենագիրների պակասութիւնից, թողնենք այն, որ հաղորդուած տեղեկութիւնք և իրողութիւնքն էլ լաւ զտած չեն գիտնական հետազոտութեամբ:

Այս աւելի զգալի է վերաբերութեամբ վերջին գարերի, ազգի անիշխանութեան ժամանակի, երբ նորա կեանքը քաղաքական կենդրոն չունէր, որոյ շուրջը նա պատելիս լինէր: Ազգի միակ կենդրոնն այդ ժամանակամիջնորդում նորա հոգեւոր իշխանութեան նիստը Ս. Էջմիածնայ Աթոռն էր, որ չկարողացաւ ամուր կապ պահպանել ազգի ընդհանրութեան մէջ, քանի որ ազգը բաժանուած էր բազմաթիւ բռնտւոր տիրապետողների իշխանութեանց մէջ, որոնք միշտ միմեանց հետ թշնամութեալիք վարուելավ շարունակ Հայոց երկիրը պատերազմների դաշտ և սրածութեանց ու յափշտակութեանց ասպարէզ արին յընթաց գարերի, միևնոյն ժամանակ շարունակ բռնտւթեամբ գաղթեցնելով ազգի մասերի իւրեանց հայրենի հողից: Նոյն յափշտակութեանց և սրածութեանց ենթարկուած է եղել և Ս. Աթոռս հայրապետական, որ բնականութար այդ պատճառով անկարող գանուած է, չնայելով իւր բոլոր ցանկութեան և ձգտման, հաստատուն կերպով ազգի ամբողջութիւնն ամուր կապած պահել իւր բարոյական իշխանութեան ներքոյ: Հասկանալի է, որ այսպիսի երերուն և տատանեալ, ամենայն րոպէ որ և է հարուածի ենթարկուելու սպասող վիճակի մէջ կարող չէր անել այն, ինչ որ ցանկանում էր և իւր պարագն

էր, բայց և որքան արել է և որքան պահպանել է ազգի միութեան կապը, այն ևս զարմացման արժանի է, աչքի առաջ ունենալով շարունակ անյաջող և խանդարիչ հանգամանքները, որոնց մէջ նա գործել է:

Պարզ է, որ ազգի այն թշուառ վիճակի հետեանքը պիտի լինէր գիտութեանց անկումը նորա մէջ, վանքերի աւերումը. վանքերի, որոնք իրանց պատերի մէջ պարփակում էին ազգի մուաւոր կեանքը: Այնքան այս թշուառ վիճակը վնասած է ազգի մուաւոր կեանքի համար աշխատող հաստատութեանց, որ նոյն իսկ Սուրբ Ամոուք չունի այսօր իւր մէջ գէթ իւր կաթու-իկոսաց գործունէութեան անընդհատ պատմագիրն և ոչ իսկ կարող եղած է նոցա գրագրութեանց և յարաբերութեանց ժողովածուն պահպանել, որովհետեւ յաճախակի աւերածութիւնք ամենայն ինչ ոչնչացրել են: Բայց և այսքան թշուառութեանց մէջ էլ, որոնք գուցէ ուրիշների համար՝ անտանելի լինէին, Հայ ազգն իւր տոկուն և դիմացկաւն բնաւորութիւնը ցոյց է տուած: Այս երերուն և թշուառ վիճակի ժամանակն էլ երեսում են ազգի մէջ եկեղեցական և աշխարհիկ անձինք, որոնք օգուտ քաղելով շատ կարճատեւ հանգստութեան րոպէներից աշխատում են ազատել ազգը յուսահատութիւնից և պահպանել գէթ իրանց նախնեաց աւանդածները, բազմաթիւ օրինակներ արտագրելով այն մուաւոր երկերից, որոնք նոքա աւանդել են: Ահա այս ձեռագիրներին կցած են լիշատակարանք, որոնց մէջ արտագրողք կամ արտագրել տուողք, յաճախ յիշում են և իրանց ժամանակակից անցքերը, որոնք կամ ազգի ընդհանրութեան և կամ սորա մի մասի գլխից անցել են, յաճախ էլ այն բնական պատուհամները, որոնք հասել են նորա վերայ:

Ուստի և այդ յիշատակարանները, մատենագիրների պակասութեան և սոցա անկարողութեան պատճառով ազգի ամեն մասերի մէջ պատահածներն իրանց գրութեան նիւթ անելու, բաւական կշիռ կարող են ունենալ մեր ազգի վերջին խաւարդարերի պատմութեան համար, նորան նիւթ մատակարարելով:

Յայտնի է, որ ամենից մեծ ժողովածուն հայ ձեռագիրների գտնում է, Ամոուքիս գրադարաննում: Ահա այս գրադարանի դռները նորին Օծութեան Վեհափառ Հայրապետի հրա-

մանով բացուեցան Արարատի խմբագրութեան, համար, որպէս զի նորա մէջ բովանդակուած կարևոր նիւթերը, որոնք վերաբերում են հայ ազգի անցեալ կեանքի բացատրութեան, տակաւ առ տակաւ, գէթ իբրև հում նիւթեր հրատարակուին և միջոց տան ազգի գիտնականներին որքան հնար է լաւ մշակելու ազգային պատմութիւնը գիտնական հետազօտութեամբ:

Խմբագրութիւնս առ այժմ Արարատի մէջ «Ս. Էջմիածնայ Գրադարան» բաժնում կսկսի հրատարակել այն պատմական նիւթերը, որոնք կերեւն ձեռագրաց յիշատակարաններում և որպէս զի այդ աշխատանքի մէջ մի կարգ պահպանուի, ձեռագիրները բաժանել էնա դարերով։ Կսկսի իւր աշխատանքը մեր դարին կից 18 ոդ դարից, այն է 1700 ից մինչև 1800 ը։ Այս դարում մէջ արտագրուած բովանդակութիւն ձեռագիրներից միայն 141 ը յիշատակարան ունին, որոնց ցանկը քաղած է գրադարանի ձեռագիր մայր ցաւցակից, որ իւր մէջ բովանդակութիւն շատ աւելի ձեռագիրների անուններ, քան 1863 թ. Թիգլիզում հրատարակած «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», Խրաւ է, դժուար է գըտնել տարի, որոյ ընթացքում արտագրած ձեռագիր չկինէր, բայց ձեռագիրներից շատերը յիշատակարան չունին։ Տարի է եղել, երբ արտագրիչներն աւելի քրտինք են թափել ձեռագիրների թիւը բազմացնելու վերայ, և եղել են սակաւ տարիք, որոնք երաշտ են եղել նոցա համար։ Այսպէս զորօրինակ 1700 թուականից միայն երկու ձեռագիր յիշատակարան ունին։ 1701 թ. միայն երեքն, իսկ 1706 թ. չինք և այն։ Խմբագրութիւնս կսկսի կարգալ յիշատակարանները ժամանակադրական կարգաւել և կհրատարակէ նոցա մէջ բովանդակուող կարևոր նիւթերը կամ նոյն իսկ յիշատակարանների խօսքերով և կամ նոցա բովանդակութիւնը կհանէ, նայելով թէ որն աւելի յարմար կտեսնէ։ Խմբագրութիւնս եթէ կարող եղաւ և բացատրութիւնք ու ծանօթութիւնք էլ կդնէ։ իսկ եթէ այլք նոյն աշխատութիւնները քաշելու լինին և բարեհանու իրանց գրուածքն ուղարկել խմբագրութեանս, ոս ամենայն ուրախութեամբ կհրատարակէ Արարատի հետեւեալ համարներում։

Խմբագրութիւնս զանց չի առնիլ հրատարակելու և նախ-

նեաց երկերից անտիպ մնացած ընտիր աշխատութիւնքն էլ, գիտութեանց որ ճիւղին էլ նոքա վերաբերելու լինին։ Այս պիսիք են հին թարգմանական ճառեր, հայ ինքնուրոյն հին և նոր ճառախոսութիւնք, վկայաբանութիւնք, պատմական գըրուածքներ, իմաստասիրական և քերթողական երկեր, գործածութիւնից դուրս մնացած շարականներ, գանձեր, աւղեր և այլն։

1700 թուականին գրած ձեռագիրներից մէկն է Մաշտոց, որ արտագրած է Կարս քաղաքում Թորոս երէցը, նահապետ կաթուղիկոսի ժամանակ։ Նա համառօտ կերպով յիշումէ իւր ժամանակի դառնութիւնն առելով։ Յիշումէ զի՞ դիմութ զաւածեալս զի իիսոր նեղ և դառն ժամանակին էր է գրելն սորա մինէ (արդեօք) Քիչուրոս Աստուածն մէր խաղաղութեան դաշե ամենայն գլուխունէց ։

Այս խօսքերը յիշեցնում են Սուլէյմանի որդու Շահ Հիւսէյնի թագաւորութիւնը Սպահանում։ Հիւսէյնի, որ թէե ուսեալ բայց մի փափկասէր, վատշուէր, կերուխումի և զրօսանաց անձնատուք անձն էր, որոյ բոլոր գործունէութիւնը կայանում էր բազմաթիւ կանանց հասրակութեամբ ժամանակ անցնելում իւր ֆահրապատ պալատում, որ կանգնել էր Սպահանի մօտ, հարաւային կողմում, շրջապատելով այն դրախտանման պարտէ զով։ Այս շահի թոյլ կառավարութեան ժամանակ նահանգները նեղլում էին կառավարիչներից, որոնք կեղեքում էին մանաւանդ քրիստոնէից։ Այս շահի ժամանակն էր, որ Աղուանք Մահմետի առաջնորդութեամբ ապստամբեցան, առան Սպահանն և գահընկէց արին շահ Հիւսէյնին, ի միջի այլօց յափշտակեցին և նոր Զուղան։

— №2373 ձեռագիրն, որոյ արտագրութիւնն սկսած է ԿՊԸ տարուց յետոյ աւարտած է Սպահանում (Նօշ) Սանտար գետի մօտ, իւր առաջին երեսում բովանդակում է երեք տեսակ ծածկագիր, որոնք երեխ գործածելիս են եղել մերայինք գաղտնի նամակներ գրելիս միմեանց, որովհետեւ Մեռովքեան նշանագրերն ամենքի համար գիւրընթերցանելի են։ Առաջին տեսակ ծածկագրերն գտառաղանագիր, երկրորդը՝ նշանա-

Գլը և երրորդը կետագիւր հն կոչւում։ Առաջին երկու տեսակներն ունին 9 հիմնական նշան, որոնցից մի կամ երկու և կամ երեք ու չորս կէտերով կազմուում են մեր 36 տառ երը։ Խակ կետագրերն կազմուում են 1, 2, 3 կամ 4 գծերից, որոնք ունին իրանց մօտ կէտեր և 9 հատով կազմուում են Հայոց լեզուի 36 նշանագրերը։

—1105 ձեռագրում, որ է մեկնութիւն գրոցն Արարածոց, յիշուում է, որ 1704 թուականին Բայազիտում իշխելիս է եղել Մահմատ Բէգ ոմն, այր Քաջանաշտ և յաղթող։ Սա եղած է մին այն բազմաթիւ իշխողներից, որոնք տիրելով Հայաստանի մի մասին, հարկատու երբեմն պարսից և երբեմն Օսմանցոց (նայելով թէ ոյք երբեւ յաղթող տիրել են Հայաստանին) վարել են անկախ իշխանութիւն և շարունակ պատերազմելով իրանց հաւասար երկրորդական իշխանաց հետ երկրի բնիկներին (Հայերին) մեծամեծ վնասներ են պատճառել սրածութեամբ և յափշտակութեամբ։ որովհետեւ որն էլ յաղթող լինէր, նորա յափշտակութեան առարկան Հայն էր, ըստ որում ամենքի հարկատու հպատակները մեծ մասամբ Հայ էին։ Այս մանր իշխանների անընդհատ պատերազմներն աւելի վնասակար են եղած Հայաստանին, քան երբեմնապէս պատահած մեծ պատերազմները Պարսից և Օսմանցոց մեծ պետութեանց մէջ։ Բոլոր յաղթող և քաջամարտ Մահմատների քաջուգործութեանց դառն բաժակը Հայ աղգն է դադարկել։

Ձեռագիր № 976 է Մաշտոց քառածալ նօտրագիր, արտագրողն է Արքահամ վարդապետ Կրետացի առաջնորդ Թրակիոյ 1721 թ։ Բովանդակում է կաթողիկոս օծելու, թագաւոր օծելու և եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու կանոնները, ևս և Տէր Առաքեալ Սիւնեաց եպիսկոպոսի, Մատթէոս և Տիրատուր վարդապետների քարոզները զանազան նիւթոց վերայ։ Սորա յիշատակարանում Արքահամ վարդապետը Ս. Երուսաղէմի տաճարում արած նորոգութեանց մասին գըրում է։

« Խններորդ ամի առաջնորդութեանն եկի աւետ Ս. տեղեացս, որ և ՌՃԿԸ ին (1719 թուականն Փրկչի) վերստին նորոգեցին զԱրքս Յարու-

թեան մեծ գմրէթն և սպիտակացուցին բովանդակ զներսն և ամենայն աղդ զիւր տեղն և վիճակն, որ ի սուրբ Յարութեան նոր նորոգեաց, որ և մեք լայնացուցաք զքարեայ սանդուխտն և բարձաք ի վերնատանէն զչորեք անկիւնի սիւնն և ի տեղի նորա կամար ձգեցաք և պայծառացաւ վերնատունն մեր և խորանն և սեղանն շքեղացաւ, Եւ այլ իցերք և պատուհանք ի ներքոյ և ի վերն, մանաւանդ ի Խաչգիւտը զսուրբ Լուսաւորչայ եկեղեցին վերնատնօք զարդարեցին և զհողաբլուրն որ ի յէջս յաջակողմն սանդըխույն էր մինչև ցառեքն (առաստաղ) բարձին և այլ բազում աշխատութիւն, զոր կրեցին թէ Ստամբօլ հպարտապետն սուրբ քաղաքիս Դրինոր զարդապետն և պատրիարքն Յովհաննէս վարդապետն և թէ սստ ի սուրբ քաղաքն ոստիկանն (փոխանորդ) նոցա յեղբայրն իմ Հաննա Յովհաննէս վարդապետն և ֆրերն իմ (եղբայր) Պօղոս վարդապետն, զոր Տէր Աստուած զվարձս փոխարինացն հազարապատիկն տացէ նոցա և իմ մասն ընդ նոսա լիցի. ամէն .

Կ. Պոլսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի ժամանակ Ս. Երուսաղէմի Հայոց մասը, նոյնպէս և Ս. Յակոբայ վանքը շատ տիուր վիճակի մէջ էր, որովհետեւ մինչև 1717 թ. բաւական ժամանակ Կ. Պոլսի և Ս. Երուսաղէմի պատրիարքութիւնը միացած գոլով, նոցա տեղակաք (մեծ մասամբ աշխարհականք) կառավարումէին Ս. Յակոբայ վանքն և միաբանութիւնը, Առքա վանքի վերայ նայումէին իբրև կապալով առած կալուածքի վերայ. ուստի աշխատում էին միայն իրանց շահը որոնել, թէ վանքի արդիւնքն իրանց սեպհականելով ու շարժական կայքերը ծախելով ու թէ կալուածքները գրաւ գնելով. այնպէս որ վանքը ընկաւ ծանր պարտուց տակ և պարտատէրերը կամենում էին թէ վանքն և թէ կալուածները ծախել տալ, միայն Յովհաննէս վարդապետն բաղիշեցի (ապա Պատրիարք Կ. Պոլսոյ Կոլոտ մականուանեալ) իւր երաշխաւորութեամբ դադարեցրեց վաճառումն Հայոց սեպհականութեանց Երուսաղէմում և գնալով Կ. Պոլիս պատրիարքացաւ և Երուսաղէմին օգնելու և իւր երաշխաւորութիւնը կատարել կարողանալու համար ընտրել տուեց Երուսաղէմի պատրիարք Ս. Կարապետի վանուց վանահայր Դրիգոր վարդապետին (շղթայակիր): Առքա երկուսը միասին ամեն կերպով աշխատեցին ժողովարարութեամբ վճարել Երուսաղէմի պարտքն և մի և նոյն ժամանակ Երուսաղէմոցի Յովհաննէս (Հաննէ) վարդապետի և Պօղոս վարդապետի ձեռքով կատարեցին վերոյիշեալ յիշատակարանում յիշուած նորոգութիւնքն և շինութիւնքն Երուսաղէմում: 1721 թուին և

Գրիգոր պատրիարքն եկաւ Երուսաղեմ, ուր շատ շինութիւններ արաւ:

№ 617 ձեռագրի, որ գրուած է ՌՃՆԴ թուականին Հայոց (1725 Փրկչական թ.) և ժողովածու է քառածալ նօտրգիր, արտագրողը Մարտիրոս Սարկաւագ ոմն է, Արևելքից, այն է Արարատեան երկրից և գնացած Երուսաղեմ: Ուխտաւոր Մարտիրոս Սարկաւագը, որ կազմել է ժողովածու գիրքը, գրումէ յիշատակարանում:

Ելի յարեւելեան երկրեն ի յԱրարաւու տանէն Հայոց, գիւղաքաղաքն Կարբու և բազում փափանզք եկի ի սուրբ և Աստուածակոն քաղաքն Երուսաղեմ ուխտի սուրբ գերեզմանին Աստուծոյն մերս և սրբութեան որչնեալ Աստուածածնի և սրբոյն Յակովրայ արիւնաշաղախ գլխոյն: Ապա շարունակում է. Եւ եկեալ ի սուրբ տեղիս տնօրինականաց և յետ յարութեան զատիկն և ես մնացի ի սուրբ Յակոր իրբև միաբան և ծառայ, վասն Երկրին Արարատեան յոյժ զօրաւոր տարակուսի (Խորվութեան) վասն զի յոյժ և կարի նեղութեան մեջ էր ազգն Հայոց վասն զօրացն Յամկաց զոր (ազգն Հայոց) ի քառ կուսէ պատեալ յարեւելեան կողմէն Միրվէիզն, որ այսօմ ատենիս առեալ էր զթախտն Պարսից, որ է Խողահան և զՅահն սղանեալ և զդրդին փախստական լեալ ի Թաւրէզ, և ի հիւսիսային հողմէն Լակոյն, որ էր Օզբէկ, որ ազգս Հայոց բազում գերեաց և զեկեղեցիս բակեաց, որ յոյժ դահճէ էր ազգաց քրիստոնէից և զբաղումն ի վարդապետաց սպանին և զբաղումն կիսամահ արարարին, և ի յարեւուաէն Օսմանլուն յարեաւ ի վերոյ Երկրին Արևելեան, եղե ազգս Հայոց իրբև գտոխնս ի մեջ բայլոց: Եւ սա (Օսմանլուն) յոյժ գերեաց ազգս մեր՝ զլուսաւորչածնին Երամն, որպէս զոշխար վաճառէին զհոդիսն բանական իրբև զանբան և ոչ խնայէին: Եւ բերեալ ի Ստամբուլ զոմանս վաճառէին Հայոց և զրմանս Յամկաց, բայց այլ ազգք քրիստոնէից էաւ և ոչ մի, Յունաց և ոչ Ֆրանքաց: Տառապեալ ազգս մեր տեսեալ զայսպիսի նեղութիւնն—վաճառականք և ի միջին Ստամբուլիք բազում գնեցին, որ և հատեալ ճար գնելց: Այլ թէ զոր ինչ գործեցին ի մէջն Երկրին թուղթ և թանգըով չէ կարելի պատմել: Բայց սուրբ և հոչակաւոր վանորայքն Հայոց զինչ եղեն՝ զմիաբանս զոմանս սպանին և զոմանս գերեալ վաճառէին և ոմանք փախստական ի ծերպս վիմաց սովամահ մրանէին: և վանորայք իրբև զաւեր մնացին, մանաւանդ սուրբ Աթոռն Էջմիածին: Հայրապետն մեր, Աստուածատուր Կաթուղիկոսն փակըստական լեալ ի Աստազատ և եղեալ ի տեղի զնվասափ վարդապետն Կարբեցի, որ էր առաջնորդ Սաղմոսավանից (այժմ աւերակ) և որ իմ գրողիս հօրեղբայր էր::

Յետոյ յիշատակագիրը պատմումէ մի թշուառ դէպք, որ տեղի

Է ունեցել նորա ճանապարհորդութեան ժամանակ. այն է՝ ուխտաւորներ տանող նաւի կործանումը։ Ստամբօլից ըստ սովորութեան ամ յամէ Երուսաղէմայ նաւը ուխտաւորներ բերումէր և այս անգամ նաւի մէջ եղած են 200 Հայ և 100 Յոյն (հռոմ) ուխտաւորներ, այլ և շատ տաճիկ նաւավարք։ Ալէկոծութեան ժամանակ սոցանից ըստ ասութեան միայն 2 հայ, 2 յոյն և 5 տաճիկ ազատուել են, որոց ինքը տեսած յէ։ Ինքը Մարտիրոս սարկաւագն ազատուել է, որովհետեւ երբ նաւը խարիսխ է ձգել Խզմիրի առաջ Երեմիա վարդապետը Ստամբօլիցի նրան ուղարկել է Խզմիր քաղաքը, որ իմանայ թէ ուխտաւորք այնուեղ էլ կան թէ ոչ և եթէ կան, նրանց էլ նաւը բերէ։ Բայց սարկաւագ Մարտիրոսը վերադառնալով նաւահանգիստը նաւը չէ գտնում, որովհետեւ հովը քցել էր նրան և ալէկոծութիւնից նաւը խորտակուել։ որոց հետ և Մարտիրոսի ինչը ընկղմել։ Ուրիշ նաւով ինքը հասնումէ Երուսաղէմ, ուր մնումէ իբրև սարկաւագ և ծառայ և արտագրումէ վերոյիշեալ ժողովածուն (ինչպէս ինքն ասումէ) և ի սուրբ Յարութիւն աշխարհամարդան դանարի մէջն, և յարւմպեան կողմէ գլուխութեանին Քրիստոսի, և խորիչի խուց Աստրոց, որ այժմ Հայոց Յեւացն է վասն պարտուց նոցա իբրև Քրաւական։ Բայց և այնովէս նուա ամ յառէ գալիս և յուժու և յերիշը պահութիւնն։

Մարտիրոս արտագրելը յիշումէ, որ 1721 թուականից սկսած Հայաստանը մեծ թշուառութեան մէջ է ընկնում, որովհետեւ չորս կողմից թշնամիք անհանգստացնում են Երկիրը։ Արեւելքից եկող թշնամի կոչում է Միրվէիզին, որ ինչպէս յայտնի է պատմութիւնից, միայն Աղուանից ազգը Պարսից դէմ ապրատամբեցնող իշխանն էր։ իսկ պարսկաստան նուաճող և Սպահան քաղաքն առնող Պարսից թախտն (գահը) յափշտակողը նորա որդի Մահմուտն էր, որ 1722ին իբրև զօրավար Աղուանից, տիրեց պարսկաստանին, Շահ Հիւսէյնին գահընկէց անելով և շատ նեղութիւն տուեց հարկապահանջութեամբ Հայերին, մանաւանդ նոր Զուղայի բնակչաց։ Մարտիրոս սարկաւագը որդու գործը հօրն է տուել կամ Միրվէիզ ասելով կամեցել է բոլոր Աղուանները հասկացնել, որոց ապստամբեցնողն էր Միրվէիզը։

Յայտնի է, որ Պարսկաստանի խռովութեան միջոցին Աղուանց ապստամբութեան, յարձակման և տիրապետութեան ժամանակ, Օսմանցիք Սուլթան Ահմետի հրամանով 1723ին մեծ զօրքով տիրեցին գրեթէ ամբողջ Հայաստանին, առին Երևան, Նախիջևան, Գանձակ և Թաւրէզ, որոնք մնացին նոցա իշխանութեան ներքոյ Թամազզուլի խանի (Նատր Նաչ) ժամանակ։ Այս արշաւանքի ժամանակ Օսմանցիք բազմաթիւ հայ գերիք տարան կ. Պոլիս, թէ Հայաստանի Պարսից և թէ իրանց մասից, ու վաճառում՝ էին այնտեղ։ Յովհաննէս Կոլոս պատրիարքը կ. Պոլսի, ինչպէս և շատ հարուստ հայեր՝ մի մասը այն գերիների թափեցին դրամով։

Նոյն ժամանակ և Լեկզիք, խառն այլ լեռնականաց հետ յարձակեցան 1223ին հիւսիսից և յափշտակեցին Նիրուանն ու Հայաստանի հիւսիսային գաւառները մինչև Գեղամայ ծովը, որոց Հայերը հազիւ կարողացան արտափել Յովհաննէս իշխանի առաջնորդութեամբ։

№ 1375 Զեռագիրը Մեկնութիւն է Գործոց առաքելոց Եփրեմի և Ոսկերերանի որ ի մի հաւաքել է Որոտնեցու աշակերտ Մատթէոս Վարդապետը։ Սորա յիշատակարանը հետեւեալն է։

«Արդ գրեցաւ մեկնութիւն գրոցս ՌՃՂԴ թվին ի Յանապատն սուլր Լուսաւորչի, ի թագաւորութեան Պարսից Նատրի Շահի. և ոմանք ասեն Թահմազ զույի. և սա յոյժ մեծացաւ զօրօք։ Զի եկն ի յաշխարհէն Խորասանայ և էառ Շահաստան և կոտորեաց ազգ և ընտանիքն Շահին իսպառ. ևս յետոյ Շահ Թամազին կալաւ և էսպան զնա. և սկսաւ կոտորեաց Օսմանլուն, ի Համագանայ մինչև Դամուրդափուն. զամենն էառ քաղաք և գաւառք և զօղք Օսմանաց, զի որն կոտորեաց փաշայիւ, և որ փախստական արար գնացին ի յերկիրն իւրեանց. Եւ այս Շահնատիրս բազում զօրօք գարձաւ և գնաց ի յերկիրն Հընդըստան և էառ զնա. և հարկատու արար իւրն. Եւ Օսմանցիք բազում զօրօք եկն ի վերայ սորա թէ ևս կրկն առցէ ի յերկիրս յարեւելեան. Եւ այս Շահնատիրս բազում զօրօք եկն ի Մուրաս թափին, զի Օսմանցի վեզիրն և բազում զօրօք եկն ի վերայ սորա. որ Քօֆոր Օղլի կոչէին. և զսորա յաղթեաց և կոտորեաց զօղքն, և զինքն ըմբռնեցին և սպանին. Եւ անցեալ այս Ժ. ամաց. Զի ևս եկն Նարայ վեզիրն որ անուամբ Եկան կոչէին և զնորա կոտորեաց զօրքն և զինքն սպանին, և բազում զօրաց նորա ձեռնակալ արարին և Խորասան գերի տարին. Նաև յոյժ նուազեաց ազգս Հայոց վասն հարկապահանջութեան սորա, և բնաւք ոչ մնաց գիւղ, գաւառք, և ոչ ապրանք, և զամենեսեան ցրուցան եղեալ, նաև ոչ մնաց վանք և յանապատ

վասն ևս հարկապահանջութեան։ Եւ այս ևս կամեցաւ ընկենուլ օրբազան գերընտիր Կամուղիկոսն ի յաթոռէն իւրմէ, իսկ վասն թէ ևս կողոստէ Սուրբ Էջմիածնոյ զոր ինչ կայ ի միջի նորա։ Եւ սրբազան գերընտիր Տեառն Դազար Կամուղիկոսի սուրբ մաքրափայլ աղօթքն, ոչ կարոց ընկենուլ զատ ի յաթոռէն, այլ առեալ դրամ, զոր ինչ կամեցաւ, վասն որոյ այս դառնաշունչ ժամանակիս յոյժ նուազեցաւ զամենայն յերկիրս զրեթէ զօղուլ ուշաղն իւրեանց ձեռօքն վաճառէին, և գնող ոչ գոյր թէ գնեսցեն, այլ կի՞ն զորդիս, և գուստրս թողէին փախչէին այլ երկիր, վասն որոյ զի որ տառապեցոյցն նոյն ողորմեցի. և Տէր աշխարհիս խաղաղութիւն տացէ։ Եւ այս եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց, «առ այս գրեցաք. և դարձեալ աղասեմ զձեզ, ովք Քրիստոսասէր լնթերցօլք, ովք ոք հանդիպիք սմա սուրբ տառիս, կարդալով կամ օրինակելով, միով հայր մեղայիւ յիշեցէք առ քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք զգծող սորա Յովհաննէս մեղսամածեալ երիցուն, և զծնողսն իմ Տէր Յովհանն և Մարինոսն։ Եւ կողակիցս իմոյ Գուլզատէն, և քերցն իմ Թամամն, Հոփիսիմէն Գայիանէն և Եղիսաբէթն, Եւ զհանգուցեալ առ Քրիստոս որդին իմոյ Ծերունին։ Մանաւանդ և ամենայն արեան մորձենաւորացն իմոց, ովք ոք լնթեռոնու զատ լի յօժար սրտիւ ողորմի ասասցի։ Աստուած իւրն ողորմեցի ի միւսանդամ գալստեանն իւրոյ. Ամէն եղիցի։ Արդ՝ միւս ևս պատմեմ հոգւցս սիրելեացդ իմոց. այս վերոգրեալ Շահնատիրս արարեալ շարութիւն ի վերայ Աշխարհիս. Զի ևս ժողովեաց հայոց և տաշկաց բազում տղայք և արար իւր զուլ. նզբար և թօփչի, այս ևս կոկիծ էր միամօրաց և աղետաց. Եւ միւս ևս ժողովեաց հայոց միայն տղայք և աղջկունք ԺԲ տարոյ աւելի կամ պակաս պսակեալ ետուր մէկ զմէկու և զամենն ուղարկեաց Խորասան։ Եւ այս ևս յոյժ դառն կոկիծ էր ի վերայ աշխարհիս, և միւս ևս հայոց ազգէս յամենայն մեղաց բազում քրիստոնեայք տանով և օղուլ ուշաղով անհամար ժողովեաց և ուղարկեաց ևս Խորասան, և անդ է ի յերկիրն Մաշատ որ կան բնակեալ։ Եւ այս վերսարին կոկիծ եղեւ մինչեւ անդ հասանել և շատք կոտորուեցան ճանապարհին, արք, կանայք, տղայք և աղջկունք։ Ապա զայս ևս ասեմք լալով, որ չուժ կապեաց զամեն յերկիր՝ յոյժ լալով, զի ոչ կարէին տալ զի ծանր էր բեռն, ցանդ ունելով ոչ կարէին տալով ազեցուցանել զնա, զինչ որ ցանէին զամենն իսպառ, կալին տանէին և տիրոջն ոչ մնայր հատ մի. յետ նորա ապրանքն ոչ բաւականանայր տալով, այլ որդիս և գուստրս վաճառէին և դրամ տային մնացելոյն բեռին։ Եւ վասն այս պատճառի ցրուցան եղեալ փախեան յօտար յերկիր։ Այս ևս խիստ յոյժ կոկիծ եղեւ ի վերայ երկրի զի անթուելի չարչարանք եղեւ քրիստոնէից և տաճկաց։ Զի ևս այս եղեւ վասն ծովացեալ մեղաց իմոց, Դեռ ևս կա այսմ ժամանակի Շահնատիրս թագաւոր վասն ծովացեալ մեղաց իմոց, զոր Տէր Աստուած աղատեսցէ զմեզ ի ձեռաց սորա ամենայն սրբոց աղօթիքն, ասասցուք ամէն։ Եւ զրեցաք Սուրբ տառս այսմ չարաչունչ ժամանակիս

Ն Խնդրոյ շնորհազարդ բարունուոյ և ձգնազգեաց Անտօն վարդապետի իւրոյ վայելումն է որ և Առաջնորդ և Հայր ի Սուրբ Լուսուորչի աստուածարնակ յանապատիս. Զոր 8էր Աստուած զսորա կեանս ընդ երկայն առուրս արացե ամէն»:

Այս յիշատակարանում՝ յիշուած նեղութիւնք, որոնք քաշել է Հայոց ազգը, նադր Շահի ժամանակուան են, որովհետեւ ձեռագիրը գրուած է 1745ին. իսկ նադր Շահը թագաւորեց 1736—1747թուականը Քրիստոսի. Այս նադրը, որ անցեալ դարի նշանաւոր աշխարհակալն էր Ասիայում և քանդեց Մեծ Մողովի կայսրութիւնը Հնդկաստանում, հասարակ ծագումից էր, Քարուլ քաղաքի գիւղերի մէկից, հայրը թաղիք շինող էր, իսկ ինքն ուղտապան. բայց յետոյ աւազակապետ դառնալով, նշանաւոր խունբ կազմեց և երբ Աղուանք տիրել էին Պարսկաստանի մեծ մասին, գահընկեց արել Հիւսէյն Շահին Սեֆիի ցեղից ու բոլոր նորացեղը կոտորել, նորա մի որդին, Թահմաղը, Մազանդարանի գաւառում պահպանել էր իւր անկախութիւնն և անուանում էր իրան օրինաւոր թագաւոր Պարսից, սորա մօտ նադրը ծառայութեան մոտաւ, զանազան ինքնազլուխ դարձած գաւառապետների ընկճեց Թահմաղի իշխանութեան ներքոյ, որոյ համար և ստացաւ սպարապետի պաշտօնն ու Թահմաղ-զուլի անունը, որև պահպանեց մինչև իւր թագաւորելը: Սա Աղուաններին յաղթելից յետոյ Թահմաղ-շահին տարաւ Սպահան և բոլոր Պարսից վերայ թագաւորեցրեց: Իսկ յետոյ Թահմաղին գահընկէց արաւ նորա զեղի կեանքի համար և նորա որդուն երրորդ Աքաս - Շահին թագաւորեցրեց, որ մանուկ էր և ինքն իբրև խնամակալ կառավարումէր տէրութիւնը: Իսկ երբ մանուկ Աքասը վախճանեցաւ և Սեփիի ցեղը վերջացաւ՝ ինքը թագաւորեց բոլոր Պարսկաստանի վերայ նադր Շահ կամ Շահնադիր անունով: Աշխարհիս ամենամեծ բռնաւորներից մէկն էր և մմնաւանդ իւր կեանքի վերջին տարիները նրան մի տեսակ գաղանական զգացմունք և ագահութիւն տիրեց: Ամենածանր հարկապահանջութեան ենթարկեց իւր հապատակներին և իբրև բռնաւոր կառկածոտ էր շատ, որովհետեւ ատելի էր նոյն իսկ իրանց Պարսիկներին: Երեկի այս է պատճառը, որ ինչպէս վերոյիշեալ ձեռագրի արտագրողը գրումէ: «Ժողովեաց Հայոց և Ցան-

կաց բազում տղայք և արար իւր զուլ, նոքար և թոփչի, ինչպէս երբեմն 0սմանցոց Օրխան սուլթանը քրիստոնեաց մանուկներից կազմեց Ենիշէրիների գունդը:

### ՆԵՐՍԻՍԵԱՆ ՇԱՄԿԱԳԻՐ.

Մեր այս 19րդ դարի սկզբում, երբ ամբողջ Եւրոպան դղըրոդում էր Նապոլէոն Ա.-ի ոտքերի տակ, Հայ ազգը՝Պոլսից մինչև Մոսկուա, Աժդարխանից մինչև Պարսկաստան և Տաճկաստան զբաղուած էր Կաթուղիկոսական վէճերով, որ մեր պատմութեան մէջ յայտնի են «Դաւիթ—Դանիէլեան Կոիւ» անուամբ: Այդ կռուի վերաբերութեամբ բացի բերանացի աւանդութիւններից ունինք և շատ մեծ գրաւոր նիւթ, անթիւ նաևակներ՝ թէ մասնաւոր մարդկանց մօտ և թէ դիւտնատանց մէջ, պաշտօնական գրութիւններ և այլն: Այդ նիւթի մի մասը հրատարակուած է արդէն, բայց անտիպ մնացած, մութ և նոյն իսկ գլխովին անձանօթ կէտեր դեռ շատ կան:

Ընթերցողը որպէս զի ըմբռնէ այդ գրաւոր փաստերի հրատարակութեան և մշակման կարեւորութիւնը, պէտք է յիշե որ Դաւիթ—Դանիէլեան կռիւը լոկ պարսկական բռնութեանց, պատիժների. ծեծ ու բանտի և սպանութեանց պայքար չէր, այլ դարագլուխ մեր նոր պատմութեան, մի ահագին վէճ երկու կռուսակցութեան մէջ, որին մասնակցում էին ոչ միայն բոլոր Հայ ազգը, այլ և մեզ տիրող երեք մեծ պետութիւնները: Ամենամեծ գործողն էր այդ բոլոր եղելութեանց ընթացքում ներսէս աշտարակցին, որի կողմը (Դանիէլեան) և վերջի վերջոյ տանում է յաղթանակը: Էջմիածինը աւերուեց այդ կռիւների ժամանակ, կողոպտուեց, միաբանները ցրուեցան, շատերը ծեծուեցան, կաթուղիկոսները կրեցին բանդ և պատիժ, տեսակ տեսակ անպատւութիւններ, պարսկական ճաշակով: Կուսակցութիւնները չէին խնայում ամեն ճիգ և ջանք հակառակորդներին որսալու, թակարդի մէջ ձգելու, լրտեսելու և վնասելու համար:

Եթէ մարդկային կեանքն անգամ ապահովի չէր, ուր մնաց